

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ **«Նորարարությունների կառավարում» V միջազգային գիտական դպրոց**

ՑԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱՌՈՒՅՑ՝ **ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, «Երիտասարդ նորարարների և գիտնականների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն**

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ **ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր**

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ՝ **16.05.2019-18.05.2019**

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ **30**

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Նորարարությունների կառավարում» V միջազգային գիտական դպրոց» ծրագիրն իրականացվում է արդեն 5-րդ անգամ: Այն իրենից ներկայացնում է կրթական ծրագիր, որը մասնակիցներին հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում ձեռք բերել ինովացիոն և բիզնես ոլորտներում բազային և կիրառական գիտելիքներ, հմտություններ և ունակություններ: Դպրոցը նաև հարթակ է հանդիսանում է Ծրագրի մասնակիցների և դասախոսների միջև գործնական կապերի ստեղծման և նոր համագործակցության համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝ խրախուսել գիտական արդյունքների առևտրայնացման և նորարարական ձեռնարկատիրական գործունեության ոլորտում երիտասարդների ներգրավումը և մասնակցությունը, զարգացնել նրանց բիզնես հմտությունները, նպաստել երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը և մասնագիտական աճին, աջակցել նորարարական գաղափարների առևտրայնացման ոլորտում տարբեր մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի հիմնական խնդիրներն են երիտասարդների համար ստեղծել ինովացիոն կրթական հարթակ՝ լրացուցիչ հատուկ կրթության, գիտական և գիտատեխնիկական մշակումների առևտրայնացման հիմունքների յուրացման համար, ինչպես նաև Դպրոցի ծրագրի հիմքում դրված ոչ ֆորմալ կրթության տարրերի, դասախոսությունների, կլոր-սեղանների, մաստեր-դասընթացների (master class) և ինտերակտիվ մեթոդների միջոցով նպաստել երիտասարդների նորարական մտածելակերպի ձևավորմանը և նորարարական ձեռներեցության զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դպրոցի ծրագրի հիմքում դրված էր կրթության ոլորտում կիրառվող տարբեր մոտեցումների և բաղադրիչների համադրման սկզբունքը՝ ոչ ֆորմալ կրթության տարրեր, դասախոսություններ, կլոր-սեղաններ, մաստեր-դասընթացներ (master class) և ինտերակտիվ մեթոդներ: Ծրագիրը կազմված էր այնպես, որպեսզի մասնակիցներին ընձեռնվեր հնարավորություն ստանալու բիզնես ինովացիոն նախագծերի գլխավոր սկզբունքների ձևակերպման և սահմանման հմտություններ, ըստ ձեռնարկության սահմանված նպատակների՝ աշխատանքների պլանավորման և կառավարման, մարդկանց հետ աշխատելու, տարբեր փոփոխություններին հարմարվելու հմտություններ կտրուկ փոփոխվող բիզնես միջավայրերում, կառավարման ոլորտում: Կրթական գործընթացում ուսուցման գործնական ուղղվածությունն ապահովելու համար հիմք են հանդիսացել իրական գիտական մշակումները և ինովացիոն նախագծերը: Դպրոցի մասնակիցները ծանոթացել են մտավոր գործունեության արդյունքների փոխանցման ձևերին և սկզբունքներին, արդյունավետ կառավարման մեխանիզմներին, բիզնես նախագծերի և բիզնես մոդելների մշակման գործիքներին, ձեռք բերել նորարարական գաղափարների և նախագծերի ներկայացման, ֆինանսական միջոցներ ներգրավելու հմտություններ: Մասնակիցների մոտ ձեռներեցական ունակությունները զարգացնելու, ստացած տեսական գիտելիքները պրակտիկ ոլորտում կիրառելու հնարավորություն ընձեռնելու նպատակով կազմակերպվել են բիզնես սիմուլյացիոն խաղեր, անհատական աշխատանքներ և խմբային վարժանքներ, որոնց ընթացքում փորձագետները մասնակիցների հետ համատեղ նույնականացրել են մասնակիցների/հեղինակների նոր գաղափարների և նորարարական նախագծերի հետ կապված խնդիրներ, մշակել են ոչ սովորական, յուրօրինակ լուծումներ դրանք կյանքի կոչելու ուղղությամբ՝ կիրառելով ուսումնական ծրագրի շրջանակներում ձեռք բերած գիտելիքներն ու տեղեկատվությունը: Ծրագիրն ամփոփվել է մասնակիցների կողմից փորձագետներին իրենց կողմից մշակված ինովացիոն նախագծերի ամփոփիչ ներկայացմամբ:

ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԾԱԾԿՈՒՅԹ

- Անհատական զարգացում
- Երիտասարդական գիտական ծրագրեր
- Երիտասարդական ձեռնարկատիրություն
- Ոչ ֆորմալ ուսուցման զարգացում և ծրագրեր
- Ստեղծարարության և նորարարության խթանում
- Ֆինանսական կառավարում և ֆոնդրեյզինգ

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ , ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ , ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի աշխատանքները սկսվել են դեռևս մարտ ամսին, երբ կատարվել է Դպրոցի նախնական ծրագրի մշակում, թրեյներների ընտրություն, թրեյներների հետ բանակցությունների վարում - 25.03.2019-31.03.2019:

Այս փուլում Դպրոցի կազմկոմիտեի կողմից մշակվել է Դպրոցի նախնական ծրագիրը: Ծրագրի թեմատիկ ուղղություններին համապատասխան ընտրվել են համապատասխան ոլորտի դասավանդման փորձ ունեցող առաջատար մասնագետներ, տարվել են բանակցություններ մասնագետների հետ՝ Դպրոցի աշխատանքներին մասնակցելու և վերջնական ծրագիրը մշակելու ուղղությամբ:

Ծրագրի կազմակերպման աշխատանքների հաջորդ փուլում իրականացվել է մասնակիցների թիրախային խմբերի ընտրություն, մասնակցության հայտի ձևաթղթի, տեղեկատվական նամակի մշակում, մասնակցության հրավերների ուղարկում, տեղեկատվության տարածում և հայտերի ընդունում – 01.04.2019-29.04.2019:

Դպրոցի կազմկոմիտեի կողմից երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) կազմվել է առաջին տեղեկատվական հրավեր նամակը, մասնակցության հայտի ձևաթուղթը և տարածվել է Հայաստանի և արտասահմանի համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ մասնագետների շրջանակներում: Դպրոցի վերաբերյալ նյութերը տեղադրվել են Դպրոցի կայքում՝ <https://yisango.wixsite.com/younginnov-arm/>, «School of a young innovator» ֆեյսբուքյան էջում, գործընկեր կազմակերպությունների կայքերում՝ <http://www.innovcentre.am> կայքում, ՆՁԱԿ-ի ֆեյսբուքյան էջում <https://www.facebook.com/InnovCentre/>, տարբեր լրատվական տեղեկատվական կայքերում և այլ տեղեկատվական ցանցերում, ինչպես նաև, մասնակցության հայտի ձևաթուղթը տարածվել է համացանցի տարբեր գիտական, երիտասարդական, համալսարանական խմբերի, համալսարանական կարիերային կենտրոնների շրջանակներում:

Մինչև ս.թ. ապրիլի 29-ը ընդունվել է 115 հայտ:

Այնուհետև կատարվել է հայտերի դիտարկում, մասնակիցների ընտրություն և ընտրված մասնակիցների տեղեկացում Դպրոցի աշխատանքներին ներգրավվածության վերաբերյալ, երկրորդ տեղեկատվական նամակի ուղարկում Դպրոցի մասնակիցներին – մինչև 10.05.2019թ.:

Դպրոցի կազմկոմիտեն Ծրագրում ներգրավված մասնագետների հետ համատեղ ուսումնասիրել է բոլոր հայտերը և շահառուների կողմից լրացված հարցաթերթերի և ներկայացված մոտիվացիոն նամակների հիման վրա կատարել է Դպրոցի մասնակիցների ընտրությունը: Դպրոցի աշխատանքներին մասնակցելու համար ընտրվել էին 2 թիրախային խմբեր՝ կառավարման հմտություններ ունեցող հայտատուները և այն հայտատուները, որոնց ներկայացված նախագծերը գտնվում էին seed /գաղափարի/ փուլում: Մինչև 2019թ.-ի մայիսի 10-ը մասնակիցները տեղեկացվել են Դպրոցի աշխատանքներին ներգրավվածության մասին: Դպրոցի ծրագիրը ուղարկվել է բոլոր ընտրված մասնակիցներին:

Աշխատանքների այս փուլում իրականացվել են նաև միջոցառման անցկացման լոգիստիկ հարցերի կազմակերպչական աշխատանքներ:

Մայիսի 16-ին «Նորարարությունների կառավարում» V միջազգային գիտական դպրոցի մեկնարկը տրվել է պաշտոնական բացման արարողությամբ Ծրագրի համակազմակերպիչ հանդիսացող Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում, որից հետո աշխատանքային խումբը մեկնել է ք. Ծաղկաձոր՝ Ալպինա հանգստյան տուն: Մայիսի 16-18-ը Դպրոցի աշխատանքների շրջանակներում տեղի են ունեցել ինովացիոն մենեջմենթի ոլորտին առնչվող սեմինարներ, դասախոսություններ, մաստեր-դասընթացներ (master class), խմբային աշխատանքներ:

Ծրագրի առաջին մասը նվիրված էր ներկա մշտապես փոփոխվող բիզնես միջավայրում դիմակայելու համար և այդ գործընթացում ստեղծագործական և քննադատական մտածելակերպի ձևավորման անհրաժեշտությանը և նշանակությանը: «Ստեղծագործական մտածելակերպ և ինովացիա» թեմայով հանդես եկան «Նորարարության խթանման և հետազոտության կենտրոնի» համահիմնադիրներ Մարի-Հրաչուհի Պողոսեանը և Էլիզաբեթ Քեշիշյանը: Հաջորդ սեսիան նվիրված էր նորարարական բիզնես սկսելու գործում շատ կարևոր բաղադրիչ հանդիսացող բիզնես պլանավորման կառավարման հարցերին, որը վարեց «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավար, բիզնես թրեյներ Դավիթ Իսկանդարյանը: Նա ներկայացրեց նաև բիզնես պլանի բաղադրիչները, կազմման մեխանիզմները՝ դասախոսությունն ավարտելով ֆինանսական մոդելավորման գործիքների մանրամասն նկարագրությամբ:

Ծրագրի երկրորդ մասը բաղկացած էր գործնական ուղղվածություն ունեցող սեսիաներից: Եվրոպական բիզնես հրեշտակների ասոցիացիայի ներդրումային ռիսկերի կառավարիչ Նարեկ Մանասերյանը ինտերակտիվ քննարկման միջոցով

մասնակիցներին ծանոթացրեց բիզնես մոդելի կտավին (Canvas), որի հիման վրա մասնակիցները, բաժանվելով խմբերի, սկսեցին աշխատել իրենց սեփական գաղափարների մոդելավորման վրա: Այնուհետև բիզնես խորհրդատու Տաթև Հովհաննիսյանը ինտերակտիվ խաղի և կոնկրետ օրինակների միջոցով ներկայացրեց մարքեթինգային հետազոտության, գաղափարի կենսունակության վերլուծության և մարքեթինգային ռազմավարության հիմնական բաղադրիչները, գործիքները և դրանց առաձևահասկությունները: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Կոլբա» նորարարական լաբորատորիայի հանրային կապերի միջոցառումների գծով պատասխանատու, ֆանդրայզինգի խորհրդատու Ջեմմա Սաֆարյանը ներկայացրեց քրաուդֆանդինգի՝ որպես նորարարական գաղափարների այլընտրանքային ֆինանսավորման միջոցի էությունը, մեխանիզմը, կիրառվող տարբեր գործիքների առավելություններն ու հաջողության գործոնները:

Հաջորդ սեսիան նվիրված էր գաղափարների՝ դրամական արդյունքի վերաձմանը, որի ընթացքում “Youth Business International” միջազգային բիզնես ասոցիացիայի հիմնադիր և անձնական արդյունավետության թրեյներ, արտոնագրված բիզնես-թրեյներ Գանի Աբադանը ներկայացրեց գաղափարների իրականացման գործում հաջողության հասնելու համար կարևոր անձնական արդյունավետության գործոնների դերը՝ ընդգծելով սեփական արժեքներին հավատարիմ մնալու դիրքորոշումը: Հատուկ նշանակություն տալով բիզնես մոդելի ճկուն փոփոխության անհրաժեշտությանը՝ տարբեր հանգամանքներից կախված՝ նա ներկայացրեց համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունների հաջողակ բիզնես մոդելների օրինակներ:

Ծրագրի գործնական մասի վերջում Եվրոպական բիզնես հրեշտակների ասոցիացիայի ներդրումային ռիսկերի կառավարիչ Նարեկ Մանասերյանը անցկացրեց գործնական սեսիա, որի ընթացքում նա ծանոթացրեց տարբեր շահառուներին նախագծերի ներկայացման հմտություններին, ներկայացրեց նախագծերի, գաղափարների առավելությունների ճիշտ կիրառման ձևերը և սխալներից խուսափելու տարբերակները:

Գործնական ուղղվածությամբ սեսիաների ժամանակ մասնակիցները բաժանվել են 3-4 հոգուց բաղկացած թիմերի՝ խմբային առաջադրանքներ կատարելու համար:

Ծրագրի ամփոփիչ մասում հիմնվելով Դպրոցի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների վրա, նորարարական գաղափարներ ունեցող մասնակիցները՝ ձևավորված խմբերով, միմյանց ներկայացրեցին սեփական գաղափարների Business Canvas մոդելները՝ հնարավորություն ունենալով ստանալու անհրաժեշտ ուղղորդում դրանց զարգացման համար: Մասնակիցներից յուրաքանչյուրը հնարավորություն ունեցավ հանդես գալ որպես ներդրող՝ սիմվոլիկ «ներդրում» կատարելով իր նախընտրած նախագծի առաջխաղացման համար:

Ծրագրի իրականացման գործում իրենց ներդրման համար բոլոր դասախոսներին հանձնվեցին շնորհակալագրեր: Ծրագրի ավարտին մասնակիցներին հանձնվեցին Ծրագրին մասնակցության հավաստագրեր:

Ծրագրի ազդեցությունը կարելի է դիտարկել և՛ մասնակիցների և՛ համայնքային/հանրապետական մակարդակով: Մասնակիցների վրա ինովացիոն դպրոցը թողել է հետևյալ ազդեցությունը՝ ինովացիոն գործունեության արդյունքների առևտրայինացման ժամանակակից և արդյունավետ գործիքների և մեթոդների մասին գիտելիքների և ունակությունների ստացում, վերջիններիս պրակտիկ կիրառումը՝ իրական նորարարական ծրագրերի հետ աշխատելիս գրագետ բիզնես պլանավորման և բիզնես առաջարկի կազմման հմտությունների ձեռքբերում: Համայնքային/հանրապետական մակարդակով դպրոցը ունեցել է հետևյալ ազդեցությունը՝ երիտասարդական ձեռնարկատիրական նոր հարթակի ստեղծում, որը խրախուսել է երիտասարդության շրջանում ինովացիոն գաղափարների տարածումը, քննարկումը և հնարավորություն՝ տարբեր մակարդակներում համագործակցություններ սկսելու համար:

Ազդեցության շարունակականության ու կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում երաշխավորվում է Ասոցիացիայի և գործընկեր կառույցների միջև ձևավորված ամուր կապով, բազմամյա համագործակցությամբ և այդ համագործակցության հիման վրա ստեղծված ինովացիոն հարթակով, որի շրջանակներում կարճաժամկետ թեմատիկ դասընթացներից զատ կազմակերպվում են նաև եռամսյա և կիսամյակային ինովացիոն ձեռնարկատիրական դպրոցներ և այլ միջոցառումներ:

Ինովացիոն դպրոցի պատշաճ տեսանելիությունը և լուսաբանումը ապահովվել են ծրագրի իրականացման բոլոր փուլերում: Նախապատրաստական փուլում Ասոցիացիայի կողմից կազմվել է «Նորարարությունների կառավարում» 5-րդ Դպրոցի մասնակիցների ընտրության մրցութային հայտը, որը պարունակում էր մանրամասն տեղեկատվություն դպրոցի նպատակների, խնդիրների, մասնակիցներին ներկայացվող պահանջների, իրականացման վայրի և ժամկետների, ուսուցման մեթոդների, ներգրավված կառույցների, գործընկերների և ակլնկալվող արդյունքների մասին: Հայտը տեղադրվել է բոլոր գործընկերների կայքերում, սոց. ցանցերի էջերում և տարածվել ԲՈՒՀ-երի, կարիերայի կենտրոնների, գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների, երիտասարդական միավորումների և այլ թիրախային խմբերի շրջանակներում: Ինովացիոն դպրոցի մեկնարկը ազդարարվել է բացման պաշտոնական արարողությամբ, որին հրավիրվել էին նաև ԶԼՄ-եր, էլեկտրոնային թերթերի և այլ լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր օրվա ավարտին «School of a young innovator» ֆեյսբուքյան էջում տեղադրվել են տվյալ օրվա նկարները և մեկնաբանվել ձեռք բերված արդյունքները: Բացի դրանից պարբերաբար կազմակերպվել են Ծրագրի սեսիաների ֆեյսբուքյան ուղիղ եթերներ: Տեղեկատվությունը տեղադրվել է նաև գործընկեր

կազմակերպությունների կայքերում՝ <http://arm.rs.gov.ru/ru/news/47828>,
<http://youthweb.am/news/hy/86078>,
http://www.erit.am/news/hy/86078?fbclid=IwAR3WcyRLH1E3var_1tHD07Hd6rqsc10gzWen9ZiKwHdZLjrKby-YH_uAYk,
<https://www.facebook.com/fpp.kz/posts/2698226770230025>: Ծրագրի ամփոփման փուլում մշակվել է Ծրագրի ընթացքի անիմացիոն հոլովակ, որն ունի ազատ հասանելիություն <https://yisango.wixsite.com/younginnov-arm/> և ներգրավված կառույցների կայքերում:

ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈՂՆԵՐ

Ծրագրի գնահատման նպատակով նախապես մշակվել էին հարցաթերթեր, որոնք պարունակում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ օգտագործված մեթոդաբանությունը, Ծրագրի համապատասխանությունը նպատակներին, ձեռքբերված գիտելիքների և հմտությունների սեփական բավարարվածության մակարդակը, թեմատիկ կարողությունների և գիտելիքների մատուցման արդյունավետությունը, ուսուցանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, սեփական ներգրավվածության աստիճանը, կազմակերպչական թիմի աշխատանքը և այլն: Հարցաթերթերը լրացվել են բոլոր մասնակիցների կողմից՝ անանուն: Լրացված հարցաթերթերի ամփոփումը ցույց տվեց, որ տրամադրվող գիտելիքները շատ օգտակար են եղել մասնակիցներին, սակայն սահմանված ժամկետի համար Ծրագիրը շատ հազեցած էր՝ սեսիաները տևողությունը երկար էր մինչև երեկոյան ժամը 20.30: Մասնակիցների կողմից նշվել էր նաև, որ գիտական արդյունքների առևտրայնացման վերաբերյալ ավելի խորը, պրակտիկ և երկարատև դասընթացին մասնակցելու հետաքրքրություն ունեն: Լրացված հարցաթերթերի հիման վրա Ծրագրում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և Ասոցիացիայի կողմից կմշակվի նոր կրթական ծրագիր:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ

Ծրագրի առջև դրված խնդիրները բարեհաջող իրականացվել են: Դպրոցի աշխատանքներին մասնակցել են մինչև 30 տարեկան հայ և արտասահմանցի երիտասարդ գիտնականներ, ասպիրանտներ, ուսանողներ, գիտական, կրթական ոլորտների ներկայացուցիչներ: Դպրոցի մասնակիցները ծանոթացել են գիտական և գիտատեխնիկական արդյունքներն առևտրայնացնելու մեխանիզմներին, գաղափարից մինչև շուկա հասնելու գործընթացին և առանձնահատկություններին,

ինչպես նաև ստացել են անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ մտավոր գործունեության արդյունքների կենսունակության վերլուծության և կառավարման բնագավառներում, ձեռք են բերել իրենց գիտական գաղափարները բիզնես առաջարկների վերածելու և դրանք հնարավոր ներդրողներին ներկայացնելու ունակություններ:

Այնուհետև աշխատանքները ամփոփվել են շատ ակտիվ և խանդավառ միջավայրում մասնակիցների սեփական նորարարական գաղափարների և նախագծերի անհատական և ձևավորված թիմերի շնորհանդեսներով: Սեսիայի ընթացքում նրանց ձեռք բերած գիտելիքների ճիշտ կիրառումը գնահատելու համար վերջին օրվա սեսիաներն անցկացնող փորձագետներից ձևավորվեց պայմանական հանձնաժողով, որը հաղթող ճանաչեց Տիգրանուհի Խալաֆյանի, Գագիկ Միրեկանյանի և Լուսինե Մաթևոսյանի «Աէրոստատ» նախագիծը: Բացի այդ, հանձնաժողովի փորձագետները բոլոր ներկայացված նախագծերի համար անհրաժեշտ մասնագիտական ուղղորդումներ ցույց տվեցին դրանց հետագա զարգացման համար: Դպրոցի ավարտին ուսուցանողների և հրավիրված էքսպերտների կողմից մասնակիցների համար մեկամսյա անվճար բիզնես խորհրդատվություն է կազմակերպվել Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի և Նորարարության Խթանման և Հետազոտության Կենտրոնի կողմից:

Դասընթացների ավարտից հետո մասնակիցներին շնորհվեցին մասնակցությունը հավաստող սերտիֆիկատներ:

Ծրագրի մասնակիցների համար կազմակերպվել է նաև տուր-շրջագայություն պատմամշակութային վայրեր:

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի համաֆինանսավորող է հանդիսացել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

Ծրագրի շրջանակներում Ասոցիացիան համագործակցում էր «Նորարարության Խթանման և Հետազոտության Կենտրոն» ՍՊԸ-ի և «Երիտասարդական միքս» ՀԿ-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Կուլբա» նորարարական լաբորատորիայի հետ՝ մասնագետների ներգրավման և Ծրագրի մշակման ուղղությամբ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի հետ՝ միջոցառման համատեղ կազմակերպման ուղղությամբ: Գործընկեր կազմակերպություն է եղել նաև Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը՝ Ծրագրին արտասահմանյան փորձագետների ներգրավման և լրացուցիչ

համաֆինանսավորման հարցերում աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Որպես փորձագետներ Ծրագրի գործընկերներ են հանդիսացել նաև Եվրոպական բիզնես հրեշտակների ասոցիացիայի ներդրումային ռիսկերի կառավարիչ Նարեկ Մանասերյանը, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավար, բիզնես թրեյներ Դավիթ Իսկանդարյանը, «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի նախագծերի կառավարիչ, բիզնես-խորհրդատու և թրեյներ Տաթև Հովհաննիսյանը:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ընթացքում որևէ դժվարություն չի առաջացել: Դպրոցի կազմակերպման և իրականացման աշխատանքներն ընթացել են համաձայն մշակված ծրագրի: Սակայն պետք է նշել, որ Ծրագրի հանդեպ հետաքրքրությունը բարձր էր, ներկայացվել էին 115 հայտ, որոնց մեծ մասը համապատասխանում էր նախապես մշակված բոլոր պահանջներին և կարող էին ներգրավվել Դպրոցի աշխատանքներին, սակայն Ֆինանսական միջոցների սահամանափակության պատճառով ընտրվել էին ավելի քիչ մասնակիցներ:

ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով երիտասարդների կողմից Ծրագրի հանդեպ ցուցաբերված հետաքրքրությունը, մասնակիցների կողմից լրացված հարցաթերթերի միջոցով ստացված արձագանքները, ինչպես նաև Ծրագրին ներգրավված մասնագետների դիտարկումները ինովացոնին, գիտական և բիզնես ոլորտներում նմանատիպ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության ուղղությամբ, կարելի է եզրակացնել, որ Ծրագիրը արդիական է և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել նմանատիպ ծրագրերի շարունակականությունը և հաճախականությունը ավելացնելու ուղղությամբ:

Ֆինանսական հաշվետվություն

Երիտասարդ Նորարարների և գիտնականների ասոցիացիա ՀԿ
Պայմանագիր № 147-2019

Հոդված/ Ենթահոդված №	Հոդվածի/ ենթահոդվածի անվանումը	Միավոր	Քանակ	Արժեք	Ամիս, Ամսաթիվ	Նախատեսված էր	Ծախսվել է	Մնացորդ/ Տնտեսում	Ներդրում	Մնացորդ/ Տնտեսում Ներդրումից
1	Հոնորարներ՝ ներառյալ հարկերը									
	Ծրագրի ղեկավար		2	132000	10.04.-10.06.	264000	264000	0	0	0
	Ծրագրի համակարգող		2	140000	10.04.-10.06.	280000	280000	0	0	0
	Ընդամենը					544000	544000			
2	Տրանսպորտային ծախսեր									
	ավտոբուս (Երևան-Ծաղկաձոր)	անգամ	1	65000	16.05.-18.05.	65000	65000	0	0	0
	ավտոբուս (Ծաղկաձոր-Երևան)	անգամ	1	65000	16.05.-18.05.	65000	65000	0	0	0
	ավտոբուս (տուր-շրջագայություն)	ուղղություն	1	125000	16.05.-18.05.	125000	125000	0	0	0
	6 փորձագետների դիմավորում	անգամ	1	30000	16.05.-18.05.	30000	30000	0	0	0
	6 փորձագետների ճանապարհում	անգամ	1	30000	16.05.-18.05.	30000	30000	0	0	0
	Ընդամենը					315000	315000			
3	Կեցության և սննդի ձեռքբերման ծախսեր									
	կեցություն (ներառյալ 3-անգամյա սնունդ)	անձ	30	15000	16.05.-18.05.	900000	900000	0	0	0
	Ընդամենը					900000	900000			
4	Գրենական պիտույքների ձեռքբերման ծախսեր									
	անվանաքարտեր	հատ	30	240	14.05.-15.05.	7200	7200	0	0	0
	նոթատետր	հատ	30	600	14.05.-15.05.	18000	18000	0	0	0
	թղթապանակ	հատ	30	600	14.05.-15.05.	18000	18000	0	0	0
	գրիչներ	հատ	30	200	14.05.-15.05.	6000	6000	0	0	0
	Ընդամենը					49200	49200			
5	Տպագրական ծախսեր									
	պրստեր	հատ	1	2000	14.05.-15.05.	2000	2000	0	0	0
	բաններ	հատ	1	9000	14.05.-15.05.	9000	9000	0	0	0
	Ընդամենը					11000	11000		0	

		Այլ ծառայություններ								
6	Դահլիճի վարձակալություն	օր	3	150000	16.05-18.05	0	450000	0	450000	0
	սուրճի ընդմիջումներ	հատ	74	1500	16.05.-18.05.	0	111000		111000	0
		Ընդամենը				0	561000		561000	0
7	Ընդամենը									
8	Ընդամենը									
9	Ընդամենը									
10	Ընդամենը									
Ընդհանուր						1819200	2380200	0	561000	0

Նախագահ



[Handwritten signature]
/անուն ազգանուն/

Կ.Տ

10.06.2019թ.

Գլխ. Հաշվապ.

/անուն ազգանուն/